

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 28

10 ՅՈՒՆԻՍ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յե՛ս մահու (սմբազրական) Տ.Ա.—Ողբումն կկուին (Քերթուած) ԱՆՏԻԵ ԹԵՕՈՒԷ. Գրա-
բար քարզմ. ՏԻԳՐԱՆ ԵԼՔԷՆՃԵԱՆ.—Մաքիկը... ու ես (Պարզամիտ մը մեծախօսու-
քիւնը) Ղ. ՎԱՐՊԵՏԵԱՆ.—Գիտական-Քրոնիկ. ՆՈՒՊԱՐ.—Հայանցումներ (Սիրերգ) Մ.
ՈՒՂՈՒՐԼԵԱՆ.—«Մնաս բարով» (Նորավեպ) ԷՏՄՕՆ ՀԱՐՈՒՈՒՐ.—Սմբազրական Նօթեր :
—Զանազանք.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթերի սարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար հաւսուն դրօ.
եւ գաւառներուն համար յիսուն դրօ. կանխիկ վճարելի : Արտասահման՝ 12 Յրանք կամ
5 ռուպլի : Թղթասարական ծախսը խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ բաժանորդագրու
քին չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին : ՄԱՍԻՍ
հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առաւ : Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած
են, պէտք է իսկոյն իմացնեն խմբագրութեան : Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առաւ-
կութիւնները նկատողութեան չեն առնուիր :

Զի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր : Եղանակաւ միջամտ չեն մտրեալ ցճադր

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայ-
մաններով :

Զեռ-ԲԷ ԿԸ ՏԱՐՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլս, Լալարիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԱՅՐ, ԿԻՆ, ՏՂԵՑ

Մարդս տենդի հիւանդութենէ վերջը տկար կը մնայ, մանաւանդ տղայ մը։
Թէպէտեւ հարկ չիտեսնուի, հիւանդին պէտք է տալ



SCOTT'S EMULSION

և տկարութիւնը անմիջապէս և վստահափար կը փարատէ
և կը տեսնուի որ

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԱԴՐՈՒԹԻՈՒՆ

մարմինը պատուէ բոլոր տկարութիւններու դեմ
ամենամեծ գեղ է։ Արեգական տակ ասոր հաւասար
բան մը չիկայ. այնպէս կատարեալ կը բժշկէ՝ որ կը
կարծուի թէ հիւանդութիւնը կուտէ ու կը կլլէ։

Հեշերտ վայ ասոր ուշա-
դրութիւնը ընել պէտք է։

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գինեգէղն. ԵՍԱՎՐՈՒՆԵՍՆ ԵՆ Յ. ԻՍՍ.
ԳՈՒԼՆԱՆԻ Զինատանէն, Հնդկաստանէն,
Ճապոնէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած
բարձր, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն,
որոնք ամբարն եղանակին յարմարագոյն ըմ-
պելին են։

Միջոց ունեւորութիւնը մեր
վաճառանիդին։

Կ. Պոլիս, Պահէէ Գափու,
ձէլալ պէյ Խան, Թիւ 10։

Մասնաձիւղեր Թուրքիոյ
գլխաւոր քաղաքներու Զէյ.
Հասցիքը անպակաս է։



ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ
Եթէ կ'ուզէք ամէն տե-
սակ գոհարեղէններ ունե-
նալ, աժան ու ճաշակա-
ւոր, թէ՛ արեւելեան եւ
թէ՛ եւրոպական ճաշակով
պատրաստուած, ժամա-
ցոյցներ, արծաթեայ դա-
ւաղաններ եւայլն, գիմ-
ցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շու-
կան, Մեծ-փողոց Թիւ 13։
Հարկը ինչ 20 կանխիկ, մնացեալին համար
100իւ 5 շաբաթական վճարով կ'անձկնալիք
դիւր 5 զիւրիւր քաղաքներէն 100իւ
10 զեղովի տեղիւրէն կ'ուզէք իւր
նորոգել 100իւ 15 զիւրիւր քաղաքներէն։



ՄԱՍԻՆ

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 28

10 ՅՈՒՆԻՍ 1904

ՅԵՏ ՄԱՀՈՒ



Իւթիւճեանի մահուան առթիւ ինծի չէյնար վէճ յարուցանել այն գրողներուն հետ որոնք փութացին, կենսագրականի ձեւին տակ, պղտիկցնել անոր գրական ու լրագրական գործունէութիւնը, մէկիկ մէկիկ զինքը մերկացնելով այն իրական արժանիքներէն որոնցմով շահած էր արդար համբաւ մը ու ժողովրդականութիւն մը զորս այնքան անաշտօրէն պատկերացուց ու նուիրագործեց Օրմանեան Ս. Պատրիարքը, —ինքն ալ ժամանակաւ պատուակալ աշխատակից մը Մաւիսին և մօտէն ծանօթ անոր հեմնադիր-արտօնատիրոջ կարողութեան, —իր պերճախօս դամբանականովը: Ինքզինքը աշխարհաբարի ուսուցչութեան նուիրած բանասէրի մը շունչը կը սաւառնէր այդ գրուածքներէն ամէնէն ընդարձակին մէջ, իր սանին կողմէ ստորագրուած, ուր Կեդրոնականի մէջ դասախօսուած Աշխարհաբար Գրականութեան պատմութեան երկասիրողին ռեփլամը զետեղուած էր շատ ճարտարօրէն: Մեր մէջ գրողներ կան որոնք ուրիշ գրողի մը մահուան առթիւն օգտուիլ կուզեն՝ ինքզինքնին գովուած տեսնելու մարմաջով, թեւադրութիւններ կ'ընեն, ներշնչումներ կուտան, համայնագէտի հովեր առած, և առանց որևէ խղճի խայթի, հեռուէն, ֆուլիսին ետեւէն կը դիտեն իրենց տարածել ուղած վարկարդկութեան դադափարին հրապարակումը, փոյթ չէ թէ կէսգարու աշխատութեամբ վաստկուած համբաւ մը խորտակել փորձեն՝ դեռ նոր գոցուող հողակոյտի մը առջև որուն քով եկած կեցած էին՝ սակայն, կեղծ սգաւորի ու վշտացեալի դիմակ մը անցուցած երեսներ:

Այս պարագան ներկայացաւ Իւթիւճեանի մահուան առթիւ ալ:

Իւթիւճեան ինք կը վարէր օրաթերթ Մասիսը՝ բայց ինք յօդուած չի գրեր եղեր հոն. Իւթիւճեան թէև նպաստած էր աշխարհաբարի կանոնաւորման ու զտման, բայց իրմէ առաջ ուրիշներ արդէն կատարած են եղեր այդ գործը. Իւթիւճեան թէև շատ մը գեղեցիկ վէպեր թարգմանած էր, բայց թերթին ընթերցողներուն թիւը աւելցնելու համար կ'ընէ եղեր: Իբր թէ, այսօրուան մեծ ու պղտիկ բոլոր օրաթերթերն ու պարբերականները իրենց տնօրէն—խմբագրապետներուն յօդուածներովը կը լեցուին ծայրէ ծայր և կարող աշխատակիցներ չեն բարձրացներ անոնց վարկը՝ իրենց գրչի օժանդակութիւնը նուիրելով: Իբր թէ աշխարհաբար Գրականութեան զոյգ մը հեղինակները իրենք եղած ըլլան այդ աշխարհաբարը ստեղծողը՝ փոխանակ զայն դասախօսական ձեւի մը վերածողներն ըլլալու: Եւ, իբր թէ, այսօրուան թերթերուն մէջ հրատարակուած թերթօններուն թարգմանութիւնները զուտ գրական նախանձախնդրութեամբ կը կատարուին և ո՛չ թէ ընթերցողներու թիւն աւելցնելու և լրագրական մրցման մէջ առաջ անցնելու նպատակով:

Մեր սիրելի ու պատուական Իւթիւճեան կարապետ էֆէնտին օրքա՛ն իրաւունք ունէր, իր վերջին տարիներուն մէջ, կեանքէ զգուած մը ու դառնացած մը ըլլալու, աղէկ ճանչնալով այն կեղծ ժպիտները որոնք կ'ուղղուէին իրեն այս կամ այն գրագէտին կողմէ և ձեռքի այն կեղծ բարեկամական սեղմում-

ները զորս կունենային իր հետ՝ ինքզինքնին աշխարհաբարի վարպետներ դառնողները։ Եւ ասոնցմէ մէկն էր որ 1902ի վերջերը, անուղղապէս լուր զրկած էր Մասիսին ծերունի արտօնատիրոջը — «Եթէ իր թերթին արդի խմբագրութիւնը ինծի դէմ գրած չըլլար ու ես մէջը գտնուէի յորեւեանի դործին, կը յաջողցնէի»։ Յաւակնութիւնը ծայրայեղ էր. իսկ զայն թեւադրող զգացման ի՞նչ ըլլալը որակող բառ մը չեմ կրնար գտնել։

Գալով այն կենսագրական—ուսումնասիրութեանը, որ թեւադրեց այս քանի մը տողերը, իրաւ է թէ անոր հեղինակը ամէնէն աւելի յարատեւութեամբ ինքզինքը այդ ճիւղին նուիրողն է նոր գրողներուն մէջէն, ինչպէս իր աշխատակցութիւնը վայելած են քնաւ Մասիսի մէջ՝ բանասիրական ու գրախօսական յօդուածներով։ Բայց սխալ պիտի ըլլար հետեւցնել ասոնցմէ, թէ երկասարկ կենսագիրը մէկ շունչով ու գրչի մէկ հարուածով կրնար դատել իւթիւճեան մը ու անչքացնել անոր անունը ու գրչի աշխատութիւնները, ըլլան լրագրական՝ ըլլան գրական—թարգմանական։

Բարեբաղդաբար, Բիւզանդիոնի խմբագրապետը՝ հրատարակելէ ետքը «Անհետացող Դէմքեր»-ու այդ հինգ յօդուածներուն շարքը, փութաց գրել, իր կողմէ, «Ի պաշտպանութիւն իւթիւճեան էֆ.ի» խմբագրականը, ուր կը շնչաւոր երեւցած քննադատութեան խստութիւնը ու կը ճշդէր Մասիսի հիմնադիր—արտօնատիրոջ օգտաշատ ու արդիւնաւոր գործունէութիւնը որուն ինքն ալ ականատես ու աշխատակից եղած է երկար տարիներ, օրաթերթ Մասիսի խմբագրութեան մէջ։ Առանց այս յարգանքը ընծայուելու և այս գոհացումը տրուելու նոյն ա՛յն թերթին մէջ, ուր այնքան անիրաւօրէն դատաւիտուեցաւ իւթիւճեան, մեծագոյն զրկանք մը գործուած պիտի ըլլար ծերունի լրագրապետին յիշատակին որ, մտքով ու մարմնով տրկարացած, գրիչը կը թողուր այն թուականին ուր գրելու իր նախափորձերը ընելու հազիւ սկսած էր դեռ ան որ, անօրինակ աճապարանքով մը ու այնքան սխալ հայեցա-

կէտներով զինքը քննադատելու պիտի ելլէր իր մահուան յաջորդ օրը։

Մտաւորական աշխարհին մէջ ալ, հանրային մարդոց կեանքն ու գործերը ուսումնասիրելու, իրենց մահէն ետքը պատկերացնելու սովորութիւնը ընդունուած է. բայց ճշդիւ ու անկողմնակալ ոգիով, և մանաւանդ գիտակցօրէն։ Երբ այս հանգամանքը կը պակսին կենսագրի մը կամ քննադատի մը քով, գէթ ունենալու է զգացումը՝ յետմահու ընծայուելիք մեծարանքին՝ ութսունամիայ անձի մը որ իր կեանքին մեծագոյն մասը գրական ու լրագրական գործունէութեամբ անցուցած է, պատուաւոր, պարտաճանաչ և արդիւնաւոր կերպով։

S. Ս.


ԿԻՐԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Պէրպէրեան վարժարանի ամսվերջի հանդէսին մէջ Հիմնադիր—Տնօրէնին կարդացած տեղեկագրէն իմացուեցաւ որ, Նշան էֆ. Գաղազեան որ իր հանգուցեալ եղբոր՝ Կարապետ էֆ.ի յիշատակին մրցանակ մը հաստատած է յաջողակ ուսանողներուն համար, տրամադրութիւն ունի կտակ մը ընելու յանուն կրթութեան և դաստիարակութեան, որմէ չքաւոր աշակերտները պիտի օգտուին մեծ մասով։ Գաղազեան էֆ.ի բարեկամութիւնն ու վստահութիւնը վայելող անձնաւորութիւններ խորհուրդ կուտան արդէն որ իրագործէ իր այդ մտադրութիւնը որ ցոյց կուտայ իր կրթասիրական ոգին և բարեսիրական զգացումները։

★ ★

Ոչ նուազ գոհացուցիչ յայտնութիւն մը եղաւ նաև Էսաեան վարժարանի հանդէսին մէջ ուր Ս. Պատրիարքը շնչաւոր վարժարանի շէնքին վրայ նոր յարկ մը բարձրացնելու պէտքը և Մկրտիչ էֆ. Էսաեան, այդ վարժարանին վերաշինող—բարերարը, որ ներկայ էր, տրամադրութիւն ցոյց տուաւ գոհացում տալու այն պէտքին. ինչպէս որ տարիներ առաջ ընդունելով Բերայի հայ համայնքին դիմումը, իր բարեյիշատակ եղբոր հետ վերաշինած էր թաղին աղգ. վարժարանը ու Ս. Յարութիւն եկեղեցին։

ՈՂՇՈՐԵՆ ԿԿՈՐԵՆ



Դալարացան արդ մայրիք .
Միջօրէի լոյս ամոք
Ոսկեզօծէ ըղմամոխիկ
Սողոսկելով նդ տերեւօք .
Թըւի թէ մեզ խօսիցին
Ուռոց պըտկանց ծիւք ի ծին ,
Եւ ուռճացեալ դալարիք :

Այդը առ եզերք լըճակաց .
Ի նարգիսաց հոյլ դողդոջ ,
Շարժեն բաժակ կիսաբաց
Ջըրառուուտից պարք ի ճօճ .
Ծառագընացք(*) և փայտփորք
Ընկճեալ հակեն զբունս ողորկ
Եւ լղգունատ ցարասեաց :

Շիկահաւիկն ի թըփին
Մըմընջէ սուղ բան աղու ,
Եւ զայն բարբառ վերըստին
Ըզնոյն գունակ յեղյեղու .
Երամք յոգունք թըռչնականք ,
Կեռնեխ , սարեակ , նոյնալանգ
Պատասխանի տան նըմին :

Ո՛վ թափանցանց աղդոյ ձայն
Օրհնեալ աւուրց դարնայնոյ ,
Ո՛վ անուշակ միարան
Թըրթուումն էից բարբառոյ .
Շուրջանակի սըփոխ խինդ ,
Մայրիք ի սէր առնուն թինդ ,
Յերգս , ի ծաղիկս հեշտական :

Սակայն ի խորշ խորագոյն
Մըմընջաձայն պուրակին ,
Լու լինի ա՛յլ իմն հընչիւն
Իբր արձագանգ ողլալին .
Հիքի կըկուին է դա քուք
Ջոր կըրկէ մէն միայնուկ ,
Դա մեռակերպ ձայն ողբոյն :

(*) Grimpereaux ի բնագրին :

Մինչ ի սարսուռ ցընծութեան
Խայտան ընդ բնաւ բոյնք ողջոյն ,
Ասացէ՛ք , զի՛նչ այդ կական ,
Հի՛մ իցէ այդ թախծութիւն .
Ընդէ՞ր հառաչդ այդ և վիշտ
Որ ինձ փախչել թըւին միշտ ,
Այլ միշտ այսրէն դարձեալ դան :

Ամաց որ ցարդ սահեցան ,
Մոռացելոց գնացելոց ,
Ո՛վ սիրելիք , է սա ձայն ,
Աստ ի ստուերաց սուգեալ ծոց .
Առ կապոյտ օղս , առ արև
Է սա ողջոյն արդարև ,
Թախանձալից տըրտմական :

Ասէ . «Ուղէչք նորք դալար ,
Զխամբեալ տերեւս ածէ՛ք յուշ ,
Խարտեալ աղջկունք , կարմրաւառ
Ծաղկեալք ի գոյն դեղձանոյշ ,
Արբո՛ւնք ի սէր պատարուն
Ջորս ըզգըլխէ հեշտ գարուն ,
Յո՛ւշ ձեզ չիբիմքըս դալար» :

Թարգմ. ի գալլիականէ
ՏԻԳՐԱՆ ԵՒ ՔԵՆՃԵԱՆ

ԱՆՏՈՒՆ ԹԵՕՏԻԻ

ԻԹԻԻՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Եթէ խնդիր ըլլայ քննելու թէ արդեօք
կ' . իւթիւճեան բարոյական լինչ ցաւով մե-
ռաւ , — ենթադրելով թէ ամէն մարդ բարո-
յական ցաւ մը կ'ունենայ անշուշտ որ իրեն
կընկերանայ մինչև մահը , — ապահովաբար
կրնայ ըսուիլ թէ Մասիսի արտօնատէր —
հիմնադրին բարոյական ցաւն այն էր որ կը
կարծէր տեսնել թէ հայ լեզուն երթալով
կ'իյնար :

Բարոյական այս ցաւը , զոր բնականաբար
անտեղի կ'ըլլայ համարիլ իր մահուան պատ-
ճառը , այնչափ սատոյիկ էր արդարև հանգուց-
եալ մեծ խմբադրապետին ու լրագրագետին

սրտին վրայ, որ իր վերջին տարիներու խօսակցութեանց գլխաւոր նիւթն էր ան. դոնէ ամէն անգամ որ իրեն հանդիպէի, — և շատ անգամ կը հանդիպէի իրեն՝ Բերայի մայթերուն վրայ, ուր սովորաբար ձմեռելու կ'ելլէր ծանր քայլերով և մահուան մօտաւորութիւնը ներքնապէս զգացող ծերունիի մը տխուր ու մեղամաղձոտ դէմքով, — այո՛, ամէն անգամ որ իրեն հանդիպէի, կը կենար անպատճառ և խօսակցութիւն մը կը սկսէր, որուն նիւթը միշտ իր զգացած ցաւին արտայայտութիւնն էր հայ լեզուին օր ըստ օրէ անկմանը վրայ, զոր ինքը կը դիտէր իր ըմբռնումով: Մեղմ, դաշն ու տխրահնչիւն ձայնով մը կը հարգընէր. — «Կը տեսնե՞ս, Պ. Նաթանեան, թէ ո՛ւր տարին հայ լեզուն հիմակուան նորելուկ գրողները. լրագրութիւն է ըրածնին. մարդիկ՝ որ իրենց լեզուն շիտկէ շիտակ չեն գիտեր, ի՞նչպէս կրնան լրագրութիւն ընել, մեղք չէ՞ այսպէս աւրել ու խանգարել մեր պատուական լեզուն՝ որուն յարգարման ու ազնուացման համար ի՞նչ աշխատութիւններ թափուած են»: Առ համեստութեան միայն չէր ըսեր «թափած եմ»: Բայց անմիջապէս կը յարէր. — Ներքին եղած է որ ֆրանսերէն կամ թուրքերէն բառ մը հայացնելու համար ժամերով որոճացիր եւ ճիշդ հայ հոմանիշը գտնելու համար, և եթէ բարդութիւն մը ընել ստիպուած եմ, հայ լեզուի ոգւոյն ու օրէնքին համեմատ կազմած եմ, և ոչ թէ հիմակուաններուն պէս, որոնք կամ սխալ կը թարգմանեն շատ անգամ, իր հոմանիշ գործածած բառերուն ճիշտ իմաստը չգիտնալուն համար, և կամ բարդութիւն մը կընեն հայ լեզուի օրէնքին ու ոգւոյն բոլորովին հակառակ»:

Եւ ամէն հանդիպմանը, երբ լրջախոհ ծերունին այս իմաստով դիտողութիւններ կընէր որոնք արդիւնք էին իր ներքին համոզման, հետեւաբար և բարոյական ցաւի մը, զոր դուրս թափել կը կարծէր զայն ինծի հաղորդելով, միշտ նոր օրինակ մը, բառ մը, նախադասութիւն մը կամ խօսք մը մէջ. տեղ կը բերէր իւր ապացոյց իր ըսածին, զոր միտք պահած կ'ըլլար վերջին ընթեր-

ցումներէն: Եւ յաղթական շեշտով մը կը հարցնէր. — «Այսպէս հայերէն կըլլայ»:

Աւելորդ է ըսել թէ այս տեսակ հարցումներ ու դիտողութիւններ ինչո՞ւ ինծի կ'ընէր, թէ և վաղածանօթ մտերմութիւն մը մեզի իրարու հետ չէր կապեր, ու մոռցած իսկ էր թէ ատենով դաւառներէն որչա՞փ յօդուածներ զրկած եմ իրեն՝ Մասիս օրաթերթին համար, զորս «Մեր շրջուն թղթակցէն» վերնագրով հրատարակելու պատուոյն կ'արժանացնէր: Եւ Մասիս օրաթերթի մէջ գրութիւն մը հրատարակել տալը դիւրին չէր 25—30 տարի առաջ, զի մեծ պատիւ էր այդ բաղդին արժանանալ, հոգ չէ թէ բոլորովին առանց փոխարինութեան ըլլար: Ընդհակառակը դեռ ինքը շնորհակալութիւն կըս պատէր թղթակցէն կամ յօդուածագրէն:

Քանի որ բարոյական այդ ցաւով կը տոհորուէր Կ. Իւթիւճեան, կարելի է որ — և չեմ տարակուսիր արդէն — որ իշներու ալ այդ ցաւը կը յատնէր: Իմ պարագային գալով՝ քաղաքավարական մեկնութիւն մը կուտար ամէն անգամ որ այդ միեւնոյն դիտողութիւնները կը կրկնէր: — «Միտեմ որ դուք ալ կը ցաւիք լեզուական այս անխնամութիւններուն վրայ, անոր համար ձեզի կ'ըսեմ աս խօսքերը», և կը յարէր — «Կը տեսնեմ թէ դուք անոնցմէ չէք, լեզուի հարազատութեան հոգ կը տանիք ձեր գրութեանց ու խօսակցութեանց մէջ»:


Հարկ չկայ ըսել թէ իր այս compliment-ներուն պատճառը՝ արդարացնելն էր իր ծերունիական միակերպ գանգատներուն կրկնութիւնները: Իսկ թէ իրօք նշմարած էր որ իր զայրոյթով իւր օրինակ առաջ քշած նորակերտ բառերն ոչ մէկը իմ գրչէն ելած է, որոնց ամէնը կարելի չէ յիշել այստեղ և որոնցմէ շատերը միտք պահած էր ու կը յիշէր, կը նշանակէ թէ անկեղծ էր իր գնահատմանը մէջ և թէ մինչև վերջին ատեններ պահած էր իր մտքի կորովը իր ընթերցումներէն դատումներ ընելու համար, թէ որոնք ինչ լեզուով կը գրեն և որոնց դէմ էր իր ցաւը:

Բայց այս պարագաները չեն որ ձգուեն.

լու կարօտ են և կարեւորութիւն ունին, այլ սա թէ Մասիսի մեծանուն հիմնադիրը ինչպէս կէտ նպատակի ունեցած էր իր թերթին մէջ հայ աշխարհաբար լեզուն զտելու, ազնուացնելու, նոյնպէս մինչև իր կեանքի վերջին օրերը՝ մտքի սեւեռագէտ ըրած էր իրեն այդ հոգ ու մտածումը: Հետեւաբար երբ կը տեսնէր թէ իր գծած ուղղութիւնէն իրեն աչքին անհանդուրժելի շեղումներ կ'ըլլային, զորս ինքը ի վիճակի չէր արգելելու, ցաւ կը զգար անկեղծօրէն, զոր ուրիշ կերպով չէր կրնար ամօքել, բայց եթէ ասոր անոր յայտնելով զայն, որ իրեն համար բարոյական ճշմարիտ ցաւ մըն էր: Եւ այդ բարոյական ցաւը սրտին մէջ ունենալով մեռաւ Մասիսի արտօնատէր — հիմնադիրը, յաւէտ անմոռանալին Կ. Իւթիւճեան:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ

Մ. Ս. — Յատկապէս «Մասիս»ի համար գրուած այս յօդուածին կցել պատշաճ կը համարինք՝ դարձեալ նախնեան էֆ.ի հակիրճ մէկ յօդուածը զոր թերթին ողբացեալ հիմնադիր-արտօնատիրոջ մահուան վաղայան օրը հրատարակեց «Արեւելք»ի մէջ և ուր՝ ամփոփ ու յստակ գիծերով կը պատկերացնէ Իւթիւճեան էֆ.ն բնորոշող հանգամանքներն ու գրչի գործունէութիւնը:



Մասիսի հիմնադիր — արտօնատէրը, որ մայրաքաղաքիս լրագրողներու երիցագոյն անդամն էր, այլ ևս պատմութեան կը վերաբերի: Եւ պատմութեան մէջ կ'արձանագրուի Կարապետ Իւթիւճեանի անունը, գլխաւորաբար չորս հանգամանքով. 1. Իբր լրագրող: 2. Իբր լեզուաբարդ: 3. Իբր թարգմանող կամ հեղինակ. 4. Իբր հա՛րային աշխատաւոր մեր շրջանակին մէջ:

1. Իբր լրագրող՝ Կ. Իւթիւճեան անդուգական կը մնայ իր երկարամեայ յարատեւութեամբ և ունեցած գրական ազդեցութեամբ. մանաւանդ 1860 — 80 թուականներուն բարձակապէս անմրցելի եղած է: Ընդհանրապէս Մասիսի պաշտպանած դասերն ու

գործերը յաջողութիւն գտած են: Իր ընդհանուր ուղղութիւնը եղած է՝ լուսամիտ պահպանողականութիւն մը: Ժամանակին բոլոր երեւելի գրողները իր շուրջը խմբուած են, Մասիսը իրենց օսկան ունենալով, իբր ամենակարեւոր թերթ: Այսպէս յաջողած են իրենց գաղափարները ընդունիլ տալ կամ գէթ ծաւալել: Մեր կրօնատոհմային աւանդութեանց, զգացումներուն և գաղափարներուն դէմ անհարկի յարձակում չէ տեսնուած երբեք Մասիսի մէջ, ո՛չ խմբագրական — տնօրէնին (Կ. Իւթիւճեանի) և ոչ ալ ո՛ր և է աշխատակցի կամ թղթակցի կողմէ: Զի Կ. Իւթիւճեան իր թերթը ամէնուն առջև բաց ասպարէզ թողած չէր. կ'ընդունէր և կը հրատարակէր այն գրութիւնները միայն, որոնց համամիտ էր ինքը: Չէր ալ հետեւէր այն դրութեան զոր լրագրապետներէն ոմանք ընդգրկած են. այն է իրենց անսութեան ու գաղափարին հակառակ գրութիւն մը հրատարակել և յետոյ խմբագրական յօդուածով կամ աշխատակցի մը գրչով զայն հերքել: Մասիսի տնօրէնը այն դաւանութիւնն ունէր թէ լրագիր մը պէտք է իր սիրած ու պաշտպանած սկզբունքներուն և խնդիրներուն առջև միայն բանայ իր էջերը, համոզուած ըլլալով անշուշտ թէ ո՛ր և է գրութիւն՝ ո՛րքան ալ հերքուի ետքէն, հետք մը կը թողու ընթերցողներուն մտքին մէջ, երբ անգամ մը լոյս տեսած է: Ասոր համար, չէր ձգեր որ թերթը իր սկզբունքին հակառակ տող մը իսկ հրատարակէ: Նոյն իսկ լեզուի մասին իր ամենամեծ փափաքն էր որ բոլոր յօդուածներուն մէջ կարելի եղածին չափ լեզուի եթէ ոչ նոյնութիւն, գէթ մաքրութիւն և քերականական կանոնաւորութիւն պահուի: Ասոր համար ընդհանրապէս սրբագրութիւն կամ փոփոխութիւն կը մտցնէր ո՛ր և է գրութեան կամ յօդուածի մէջ, որուն լեզուն չատ խեցքեկ գտնէր:

Բայց Կ. Իւթիւճեան միայն լեզուի մասին չէր որ puritain մըն էր, այլ և գրական բարոյականութեան մասին: Բոլոր Մասիսեանք մէջ որ հրատարակուած են իր խմբագրապետութեան և տնօրէնութեան ներքեւ,

անկարելի է գտնել անպատկառ ոճ կամ գաղափարի մը արտայայտութիւնը։ Այս պատճառներով Մասիս համբաւ մը ունէր, որ երբեք չաղարտեցաւ. բարեկերթ, բարեշնորհ դասակարգին նախասիրական թերթն եղած էր և մնաց մինչև վերջը։

1873ին Մասիսի անունը ու պատիւը շատ աւելի բարձրացաւ և իր ծաւալումն ալ ընդարձակեց։ Այդ ատենէն Մասիս իր բարձրագոյն կէտին հասաւ, ուրկից չի՛ կաւ, մինչև որ Արեւելի հետ ձուլուեցաւ 1884ին։ Թէ՛ մայրաքաղաքիս և թէ՛ դաւառներուն մէջ ո՛չ ոք կրնար առանց Մասիս կարգալու մնալ, եթէ լրագրի ընթերցող էր. անհրաժեշտ ու անխուսափելին դարձած էր։

2. Այսպիսի անզուգական կարեւորութիւն ունէր Մասիս նաև լեզուի մաքրութեան և հարադատութեան կողմէ։ Պարզապէս իր ընտիր հայերէնն էր որ տիրեց ու տիրապետեց ամէն տեղ, թէ՛ մայրաքաղաքիս և թէ՛ գաւառներու, թէ՛ գրեւու և թէ՛ խօսելու մէջ։ Զի Իւթիւճեան իր թերթին հրատարակութեան բովանդակ չըջանին մէջ, որ երեսուն երկու տարուան երկար ժամանակամիջոց մըն է, հայերէն աշխարհաբար լեզուն կոկելու, զտելու, կաղմակերպելու այնչափ հոգածութիւն և ուշադրութիւն նուիրած է, որ չափադանցութիւն չըլլար կոչել զինքը, խօսուող և գրուող աշխարհաբարին զլխաւոր լեզուալարդարը։ Իրմէ առաջ աղքատ ու խեցեկ լեզու մը կը տիրէր ընդհանուրին բերանը և գրչին վրայ, օտար բառերով և ասացուածներով խառնուած։ Հազիւ մատի վրայ կըրնային համրուիլ բացառութիւն կաղմողները։ Մասիս, այսինքն Կ. Իւթիւճեանն էր որ մաքուր ու հարադատ հայերէն աշխարհաբարը ընդհանրացուց, որուն շատ ոճերը, բառերը, ֆրանսերէն բացատրութեանց դէմ թարգմանածոյ պատշաճ կիրառութիւններն ալ ինքը կերտեց և զարդարեց, որոնք ա՛լ 'ս հիմակ սովորական ու հոնրածանօթ են։

3. Իբր թարգմանող կամ հեղինակ՝ Կ. Իւթիւճեան ոչ նուաղ նպաստած է հայերէն մաքուր աշխարհաբարի կաղմութեան ընդհանրացման իր 35է աւելի ստուարահատոր

թարգմանութիւններով, որոնք նախ իբր թերթին ապուած են և իբր թերթին հրատարակուած այնքան ուրիշ թարգմանութիւններով, որոնք ամէնքն ալ միեւնոյն սահուն ոճը, մաքուր լեզուն և ընտիր հայերէնն ունին։ Ըսել է որ լրագրապետութիւնը և թարգմանութիւնը հաւասարապէս ի սպաս դրած է Կ. Իւթիւճեան՝ հայերէն ընտիր աշխարհաբարի յօրինման, յարդարման և ընդհանրացմանը։ Արդարև երկուքին մէջ ալ յաջողած է կատարելապէս։

Բայց դիտելու արժանի ամենակարեւոր պարագայ մըն ալ սա է թէ Կ. Իւթիւճեան ինչպէս չէ թողած որ իր թերթին մէջ անշնորհ բացատրութիւն մը սարգի, նոյնպէս իր անագին թարգմանութիւնները եւրոպական այնպիսի գրքերու վրայէ ըրած է որոնց և ոչ մէկը անպատշաճ ու անբարոյացոյցի բովանդակութիւն կամ նկարագրութիւն ունի։ Գլխէն մինչև ոտքը անկեղծ puritain մըն էր թէ՛ իր թերթին և թէ իր թարգմանութեանց հրատարակութեան մէջ, ոչ միայն լեզուի ալ և բովանդակութեանց մաքրութեան մասին. բաց աստի, թարգմանութեանց մէջ այնպիսի ընտրողականութիւն մը ունեցած է, որ միշտ կրնան կարգացուիլ իր հրատարակածները։

4. Իսկ իբրև հանրային աշխատաւոր, Կ. Իւթիւճեանի համար սաչափը բաւական է ըսել թէ չուրջ 60 տարի մեր շրջանակին մէջ բան մը տեղի ունեցած չէ որուն ուղղակի կամ անուղղակի մասնակցած չըլլայ, սկսեալ Պատրիարքարանի Օրէնքին խմբագրութենէն մինչև իր կրթական տեսչութեան տեղեկագրութիւնները։ Ամէն ինչ դործի, զիրքի, պաշտօնի և կացութեան մէջ ալ որ դասուած է, երբեք չէ չեղած ուղղութեան, պարկեշտութեան և օրինաւորութեան սահմանէն։

Ահա այս յատկութիւններով էր, իրենց ընդհանուր դիժերուն մէջ ամփոփուած, որ Կ. Իւթիւճեան աւելի քան երեք քառորդ դարու կեանք ունեցաւ, գրեց, խօսեցաւ և աշխատեցաւ, թողով յիշատակ մը անարատ ու մաքուր՝ որ անմուսաց պիտի մնայ։

(Արեւելք, Թ. 5676, յուլիս 2)

ԵՍ... ՈՒ ՄԱՔՐԻԿԸ

(ՖԱՆԹԵԶԻ)

(ՊԱՐԶԱՄԻՏԻ ՄԸ ՄԵՆԱԽՈՍՈՒԹԻԻՆԸ)

ՏՕՄԻՆՈՒՆ

Դիչերները կը քնանամ. պղտիկուցի վեր ախպէս վարժուած եմ. իսկ այն գիշերը... մեռեր էի: Սուրբ Սարգիսին հետ դէմ դէմի անկիւն մը նստեր էինք և կը խօսակցէինք: Քիչ մը ասկէ քիչ մը անկէ՝ բաւական բան ըսինք մէկ մէկու: Սուրբ Սարգիսն ալ հասկըցածք չէ, անանկ աղուոր կը խօսի որ մշտիկ ընելէն չեա կշտանար: Ըսի իրեն թէ իրեն պէս causeur չունինք վարը՝ երկրի վրայ, և եթէ ուզէ մտնել մեր հայլայֆական ընկերութիւններուն մէջ, fureur կրնայ ընել պարզապէս: Ըսածիս ականջ չի կախեց. երեցածին նայելով, երկնքի մէջ երկրային հրաւերներէ չեն ասորժիր: Չի մոռնամ ըսելու որ Սուրբ Սարգիս սոսկալի կատողած է մեզի՝ Իզմիրցիներուս դէմ՝ առարկելով թէ մառու կը խաղանք:

— Հիմակուան մարդիկը խելքերնին կնիկներուն կուտան և զրամնին մառուսի բօքին մէջ կը նետեն, մինչ ասկէ առաջ մարդիկ խելքերնին գործի կուտային ու զրամնին ժամուն թապախը կը նետէին:

Եւ ես որ acharné մառու խաղացող մըն եմ, գետնին տակը անցնիլս բան մը չէր, և սակաւն անտարբեր ձեւով մը—կնկան գլխարկ ծախողի մը չափ կեղծաւորաբար, «Իրաւունք ունիք» ըսի և խօսքը դարձուցի:

Չէք գիտեր ինչ անուշիկ սուրբ է Ս. Սարգիսը, անանկ որ ժամէ մը ետքը այլևս մտերմացած էինք և ես որ մարդ կը փնտռէի սիրտս բանալու համար, յարմար սեպեցի մարդու նալէ հասկցող Սուրբ Սարգիսին կտիկ կտիկ պատմելու ինչ որ կար սրտիս խորը:

— Սուրբ Սարգիս, վրայ բերի, ինչեր կ'ընեն սիրոյ աշխարհին մէջ, գիտնայիր: Կը ճանչնա՞մ երիտասարդներ որ սիրուհի կը փոխեն այնպէս ինչպէս ջղագրգիւ աանտիկին-

ները՝ սպասուհի... Այսօր կը մեռնին Զարուհին համար, վաղը յարութիւն կ'առնեն Ատէլին համար... և միշտ սիրոյ սաստիկութենէն: Սիրադրուժ մարդոց ռեֆօրման Իզմիրի թուղերուն բերքէն աւելի առատ է... և Պոլսոյ կանկառներէն ոչ նուազ: Բայց ես, ինքզինքս գովել չըլլայ, մէկ հատիկ եմ, մէկ հատիկ մը միայն սիրած ըլլալուս համար, Մաքրիկը, — ինչ ալ աղջիկ Մաքրիկը, — հոգիս իրենն է, սէրերուն ամէնէն սերտովը կապուած եմ անոր, ան ալ ինծի, արդէն գիտես, այնպէս չէ՞:

— Չէ, պատասխանեց Սարգիս չոր շեշտով մը:

— Զարմանալի բան, երկրի վրայ ամենուն բերանն է, մինչև հոս չիմացուեցա՞ւ: Ես կը կարծէի որ դուք հոս Սիրոյ երդումներու, խոստումներու հաշիւը կը բռնէիք: Ուրեմն այն մեզի պէս անուշ խօսքերը զորս ըսի Մաքրիկին, լուսնի գիշերով մը՝ չարձանագրեցի՞ք ձեր տոմարներուն մէջ:

— Ատանկ պղտիկ խնդիրներու արձանագրութիւնը գրադրիս յանձնած եմ: — Ու Սուրբ Սարգիս հրեշտակ մը կանչեց: Այս վերջինը խոշոր տոմար մը թելին տակ՝ մօտեցաւ: Սուրբ Սարգիսին հրամանին վրայ, գրադիրը սկսաւ հաշիւները պրպտել՝ մէյ մըն ալ էջ մը բացաւ ուր իմ անունս գրուած էր: Եւ, ինչ կուզէք որ տեսնեմ... ապշեցուցիչ բան, դպրոցական օրերէս սկսեալ որչափ աղջիկներու հետ որ սիրաբաներ էի ամէնքն ալ նշանակուած էին: Հրեշտակը կարդալ սկսաւ, Սուրբ Սարգիս մտիկ ընել... և ես... ես ըլլալէ դադրիլ ամօթէս:

— Ահա, Պարոնին թիւ մէկ սիրաբանութիւնը, — արտաբերեց հրեշտակը:

«Աղուոր պէպիցաս, դպրոցն ալ, տունս ալ քու վրադ կը մտածեմ, դուն ալ ինծի սիրէ, խըյանէ՛ թ»:

— Բա՛ւ է, հառաչեցի հրեշտակին ինքնաբերաբար, ա՛ա ձգէ, Մաքրիկին հաշիւը գտիր, ա՛դ բան մը չէ, և յետոյ ինչ կ'ըլլայ... մանուկ եղած ատենս ատանկ բան մը գրեր եմ և միակ սէրս է որ ունեցած ըլլամ Մաքրիկէն առաջ:

— Ի՛նչ, ըսաւ հրեշտակը լայնօրէն խնդալով, և կարդալ շարունակեց այսպէս .

«Թիւ 2

«Հոգիս Լիլիս, միշտ ու միշտ քե՛զ կը պաշտեմ, քեզի համար ծնայ, քե՛զ սիրեցի միայն ու պիտի շարունակեմ ասորիւ մինչև որ մեռնիմ քեզի համար... անսման Լիլիս»:

Ու տակաւին պիտի շարունակէր կարդալ... եթէ գետնին տակը անցնելիք զոյն մը առած չըլլար երեսս:

Սուրբ Սարգիս խոթող դէմքով մը ինծի նայեցաւ: Կը դողդղայի:

— Թող ատո՛նք, — վրայ բերաւ Սուրբ Սարգիս երկնային լրջութիւնով մը, — Մաքրիկին հաշիւը գտիր:

— Մաքրիկի՛նը - ձայնեց հրեշտակը, — այս պարոնին սիրաբանութիւնները ամբողջ երեք էջ գրաւած են, իր 14 սիրուհիներուն հետ 1400 սիրատոմս փոխանակած է և ամենքին ալ ըսած է անխտիր «Բեզի համար ծնայ, ու պիտի մեռնիմ քեզի համար»:

Այս սարսափելի յայտնութիւններուն վրայ՝ կաս կարմիր կտրեցայ. ստախօսութիւնս մէջ տեղ ելած էր, ի՛նչ ճշնամամ Աստուած իմ. Սուրբ Սարգիս ծուռ ծուռ ինծի կը նայէր, իսկ ես չիփ չիտակ գետնիւ: Արցունքները սկսան կաթկթիլ աչքերէս, քրտինքը ճակտէս և հետեւեալ կցկտուր բառերը բերնէս.

— Ներէ՛, ներէ՛, Սուրբ Սարգիս, ներէ՛, Մաքրիկը գայ նէ հոս՝ չըլլայ որ բան մը ըսես:

Այս խօսքիս վրայ, հրեշտակ — գրադիրը քահ քահ մը ձգեց և մինչ ես ապուշի մը պէս երեսը կը դիտէի, անիկա հեգնօրէն ըսաւ.

— Պարոն, հանգի՛ստ եղիք... Մաքրիկը ձեզմէ աւելի առաջադէմ է. անոր սիրաբանութիւններուն թիւը 20ը... կ'անցնի և դուք 21երորդ էք!!!

— Ե՛ս, Մարտիր, ես քը... սա... նը... մէկ երրորդը... Օհ, Սուրբ Սարգիս թո՛ղ գօտիս, ա՛ռ հոգիս...:

(Նմանողաբար)

Ղ. ՎԱՐՄԵՏԵԱՆ

Իզմիր

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Ռատիոմ եւ ՄԵՏԵՅԵՄԱՆՈՐ ԵԱՐԺՈՒՄ. — Շքր բուքի գործիք:

Ականջը խօսի Հ. Մեհեղիշեանին և իր աշակերտ՝ Պ. Եփրեմեանին, որ անցեալները Վիեննական վարժարանի հանդէսին մէջ Պոլսոյ օրաթերթերուն կը նուիրէր իր այն հազարաւոր տողաւոր, զորս միլիառաւոր Ամերիկացիէ մը իր մրցանակ չհաճ էր մշտնջենաւոր շարժումը գտած ըլլալուն համար: Ծաբաթաթերթերը զուրկ մնացին այս նուիրատուութենէն, սակայն երբ այսօր Մպօիս կը ներկայացնէ մշտնջենաւոր շարժումը իրականութեան հասած, անշուշտ իրատունք պիտի ունենայ պահանջելու Պ. Եփրեմեանին որ քանի մը հազար տողար ալ իրեն զրկուի՝ հնչուն զրամով և ոչ թէ... խօսքով:

Ռատիոմ նորագիւտ տարրին հրաշալի յատկութիւններուն վրայ ասկէ առաջ երկարօրէն զրած եմ. այս յատկութիւններուն ամենէն ուշագրաւը ռատիոֆին արձակած մասնաւոր ճառագայթներն են, որոնք տեսեալեան են և ինքնաբոլիս: Այս ճառագայթները ամենափոքր գնդիկներէ կազմուած են և սոսկալի արագութեամբ մը կ'ընթանան: Գլխաւորաբար երկու տեսակի կը վերածուին այս գնդիկները, ոմանք շատ փոքր և ոմանք ալ բաղդատաբար աւելի մեծ: Գաղափար մը տալու համար անոնց մեծութեան կամ փոքրութեան վրայ, կրնանք համեմատել ջրածնի մէկ հիւլէին հետ:

Փոքր գնդիկները 2000 անգամ աւելի փոքր են ջրածնի մէկ հիւլէէն և նշանակելի արագութեամբ մը օժտուած են. անանկ որ, կրնան մրցիլ մինչև իսկ լուսոյ արագութեան հետ, որ մէկ երկվայրկեանի մէջ մինչև 300,000 քիլօմէթր կ'ընթանայ: Ասկէ զատ, այս փոքր գնդիկները, իրենց այդ արտասովոր արագութեանը հետ մէկտեղ նշանաւոր յատկութիւն մըն ալ ունին, այն է, թափանցել կարգ մը նիւթերէ. օրինակի համար ալիւմինիումէն, կապարէն, սղինձէն և գործարանաւոր նիւթերէն:

Մեծ գնդիկներուն գալով, ատոնք իրենց ունեցած արագութեամբը շատ տկար են փոքր գնդիկներէն և թերեւս 20 անգամ աւելի տկար լոյսին արագութենէն. հետեւաբար ասոնք չունին այն թափանցելու կարողութիւնը փոքրերուն պէս և կարգ մը հաստատուն մարմիններէ անցնելու դժուարութիւնը ունին. օրինակի համար եթէ ռատիոմի շառաւիղներուն անցքին վրայ ալիւմինիումէ թերթ մը դնենք, հաղիւ $\frac{1}{100}$ միլիմէթր թանձրութիւն ունեցող, կը տեսնենք թէ շառաւիղները կ'արգելուին: Ամէն պարագայի մէջ, այս երկու տեսակ գնդիկներու միաւորումը, ռատիոմէն արտաբղխած, մեծ ուժգնութիւն մը կը ծնի և կարեւոր արդիւնքներ յառաջ կը բերէ, քանի որ, ինչպէս ասկէ առաջ գրած ենք, այս ճառագայթները ելեկտրականութեան և մագնիսականութեան իաւնութիւն մըն են: Անոնք կ'ազդեն լուսանկարչական բլաքներու վրայ, կը գունաւորեն ապակին, սպաղիոնը (topaze), քուարձը (quartz), գործարանաւոր մարմիններու, ինչպէս մարդու վերնամաշկին վրայ կ'ազդեն, և ասկէ դատ կարգ մը մարմիններու լուսափայլութիւնը կ'աւելցնեն, ինչպէս զինկի ծածմբուկինը (sulfure de zinc). Ուիլեամ Բըրուքս, ռատիոմին այս գնդիկներու գոյութիւնը հաստատեց վերջերս մասնաւոր գործիքով մը (spintariscopes), որմէ յետոյ Պ Շթրութ կրցաւ ուրիշ փորձով մը գտնել թէ՛ ռատիոմը պիտի կրնայ լուծել նաեւ մօսցեմաւոր շարժում (mouvement perpétuel) ըսուած կնճռոտութիւնը, որ երկար ատենէ ի վեր գիտուններուն միաքը կը յոգնեցնէր: Պ. Շթրութի փորձը անշուշտ, իր հիմակուան անկատար վիճակին մէջ գործնական կարեւորութիւն մը չ'ընծայեր, սակայն յառաջիկային մէջ գիտուն մի օրերու համար կարեւոր ստատ մը կրնայ հանդիսանալ: Ահաւասիկ թէ ի՞նչ է Շթրութի փորձը:—Ապակեայ զանգակի մը մէջ, որուն մէջի օղը պարպուած է և ուր կատարեալ պարապութիւն կը տիրէ, քուարձէ(*) շինուած բունէ

(*) Քուարձը (quartz) իբր մեկուսացուցիչ գործածուած է, ելեկտրականութեան վատ հաղորդիչ ըլլալուն համար:

մը կախուած է ապակիէ փոքրիկ փամփուշտ մը, որ կը պարունակէ ռատիոմի ո և է աղ մը, օրինակի համար ռատիոմի մաքուր ժահնուկ (bromure de radium pur) որուն մեկ կրամը կը ծախուի այժմ 400,000 ֆրանքի. —անշուշտ երկաթուղիի վիճակահանութեան մեծ պարգեւը շահելէն աղէկ է՝ կրամ մը ռատիոմ ունենալը: Ապակեայ այս փամփուշտին տակէն ոսկիէ երկու բարակ թելեր կախուած են, ճիշդ ելեկտրադէտի (electroscope) մը ձեւով, որոնց ծայրերը իրարմէ հեռանալով՝ կուգան դպչիլ ապակեայ զանգակին ներքին կողերուն, ուր երկու մետաղեայ թերթեր դրուած են՝ հողին հետ հաղորդակցութեան մէջ ըլլալու պայմանաւ:

Թէ ի՞նչպէս կը գործէ այս գործիքը, լաւ ըմբռնելու համար հոս պէտք է գիտնալ թէ, ըստ Շթրութի, ռատիոմէն ծնունդ առնող փոքր գնդիկները ժխտական ելեկտրութիւն, իսկ մեծ գնդիկները դրական ելեկտրութիւն կը պարունակեն իրենց մէջ, փոքր գնդիկներուն ելեկտրութիւնը, ինչպէս վերը ըսուեցաւ, կը թափանցէ կ'անցնի ապակեայ փամփուշտէն դուրս, իսկ մեծ ռադիկներունը՝ ոչ: Արդ, Շթրութի զործիքին մէջ, ռատիոմի աղ մը պարունակող փամփուշտը դրական ելեկտրականութեամբ կը լեցուի, քանի որ այս վերջինը դուրս չի կրնար ելլել, իսկ ժխտականը ապակեայ զանգակին մէջ և անկէ դուրս կ'ելլէ: Խնդիրը հոն չէ սակայն. փամփուշտին տակէն կցուած ոսկի թելերը, դրական ելեկտրութեան ազդեցութեամբ իրարմէ կը բացուին կը հեռանան(*), քանի որ միևնոյն ելեկտրութեամբ լեցուած են: Երբ բացուին այս թելերը, իրենց ծայրերը կ'երթան կը շօշափեն ապակեայ զանգակին կողերուն վրայ զետեղուած մետաղեայ թերթերը, որոնք ելեկտրականութիւնը հողին կը հաղորդեն: Թելերը նորէն կը մօտենան իրարու, նորէն ելեկտրականութիւն կ'ընդունին, կը հաղորդեն հողին ու նորէն իրարու կը մօտենան և այսպէս շարունակաբար ու մշտնջե-

(*) Նման ելեկտրականութիւններ իրար կը վանեն, հակառակ ելեկտրականութիւններ իրար կը քաշեն:

նաւոր կերպով, ցորչափ ռատիոմի աղը հա-
տած չէ: Թեկերուն այս շարժումները այնքան
արագ կ'ըլլան, որքան որ ռատիոմի աղին
քանակութիւնը շատ ըլլայ ապակեայ փամ-
փուշտին մէջ: Եւ որպէս զի փորձը լաւ յա-
ջողի պայման է որ ռատիոմի աղը կատարե-
լապէս մեկուսացած ըլլայ և այդ պատճառաւ
է որ քուարձը դորժածուած է, իբր մեկու-
սացուցիչներուն ամէնէն ընտիրը: Նոյնպէս
պայման է որ ապակեայ զանգակը կամ ըն-
դունարանը կարելի եղածին չափ կատարեալ
պարապութիւն ունենայ, որպէս զի, օդը,
իբր ելեկտրութեան լաւ հաղորդիչ՝ ռատիոմի
աղը եցութեամբ սլառճառ չըլլայ ելեկտրա-
կանութեան կորուստի կամ փախուստի:

Կը տեսնուի ուրեմն որ շարժումը կատա-
րելապէս մշտնջենաւոր է, նկատելով ռա-
տիոմի աղերուն կամ լաւ ևս անոր ճա-
ռագայթներուն տեւական կերպով արտա-
րելումը:

ՆՈՒՊԱՐ

ՄՆԱՍ ԲԱՐՈՎ'Ը

(ՆՈՐԱՎԷՊ)

— Ինչպէս է արդեօք. ի՞նչ եղած է.
ի՞նչ կ'ընէ. գէթ երջանիկ կեանք մը ունի:

Յորմէհետէ ինքզինքը վերստին գտած էր
աշխարհի վրայ և ողջերուն մէջ կ'ապրէր՝
փոխանակ զերեզմաններու վրայէն քաշելու,
յորմէհետէ քաղաքներու մթնոլորտը կը չըն-
չէր, Տրաքեան կրօնաւորը կը տանջուէր միակ
բաղձանքով մը. «Գիտնալ»: Այդ մանկամարդ
աղջկան սիրոյն համար և անոր ցաւէն, խոր-
տակելով իր կեանքը ու հրաժարելով տմէն
բանէ, վանքի մը մէջ գաղտնի փակուեր էր,
ու տասներեք տարիէ ի վեր ոչինչ յիշեցու-
ցած էր իրեն բացական՝ բայց եթէ անխախտ
սէրը ճգնաւորի մը որ կը յիշէ ու չի կրնար
մոռնալ:

— Ինչպէս է արդեօք. ո՞ր կը գտնուի:
Տօն Ֆիլիբի բոլոր փափաքն էր տեղե-

կութիւն մը, բարեբաղդ հանդիպումը մէկու
մը որ գիտնար Հօրթանսի կեանքը ու կա-
րենար պատմել զայն: Իր ամբողջ երկտա-
սարդութեան արգելափակ լռութենէն յետոյ
միակ բանի մը կը բաղձար. գիտնալ, լա-
ւագոյն կերպով երեւակայելու համար: Այս
փափաքը, իր մտքին մէջ արթննալէն ի
վեր, չէր թողուր զինքը ու կը տանջէր,
տիրապետելով իր բոլոր արարքներուն և
առաջնորդելով իր քայլերուն. առանց այս
բա՛ր ինքզինքին խոստովանիլ ուղեւոր,
ա՛յն տեղերը միայն կերթար յօժարակամ ուր
կը յուսար գտնել բաղձացած դիպումը. ի
զուր, անօգուտ տեղափոխութիւններ կը
կատարէր. զիպուածը չէր նպատուէր իրեն,
և դժհացում տալու համար իր բան մը իմո-
նալու փափաքին, հանդիպումներ կերեւա-
կայէր, խօսակցութիւններ կըստեղծէր, և
սրտատրոփ՝ մօտիկ կ'ընէր ինքզինքին տուած
պատասխաններուն:

Այս տաղնապին հետեւանօք, իր փափաքը՝
նորանոր երեւակայութիւններով վաւ պահ-
ուած՝ աւելի՛ ստիպողական, աւելի՛ սուր կը
դառնար, և որոյ ըլձանքներով կը չարչար-
ուէր: Շատ չանցած, այլեւս իրեն բաւական
չերեւցաւ լսել և գիտնալ ուղեւոր. հարկ էր
տեսնել, ո՛չ թէ այդ կինը, այլ աչքեր որոնք
զայն տեսած ըլլային, նայուածքներ որոնց
մէջ պարօրուած ըլլար անոր հմայիչ պատ-
կերը, և դիտել այդ հայելին, սուղուիլ ա-
նոր մէջ:

Այսպէս իր ներսիդին ծնունդ կ'առնէր
զայն տեսնելու և անոր մօտենալու նենգա-
ւոր պէտքը. տակաւ տակաւ, փորձութիւնը
կը պաշարէր զինքը. ինք կերկնէր զայն՝
առանց կասկածելու թէ արդէն պիտի բըռ-
նուէր անկէջ. այնպէս որ, երբ զաղափարը
յստակօրէն արտայայտուեցաւ իր մէջ, զինքը
հնազանդելու պատրաստ գտաւ:

— Տեսնել այդ կինը:

Ճգնաւորի այս ժանդոտած հոգիին մէջ,
ուր ո՛չ մէկ որոշում չէր, ուրուագծուած
տասներեք տարիէ ի վեր, կամքը դուրս
եկաւ յանկարծ զսպանակի մը պէս, նոյնքան
աղմկալից որքան անախկալ, և հիւանդի

պահանջում մը դարձաւ, կծու, ստիպողական, որ ո՛չ իրաւախոհութիւն կ'ընդունի ո՛չ յայտադրում:

— Ի՞նչ. ես իրաւունք չունիմ այս բանին: Տասներեք տարի սպասելէս ետքը միթէ ինքզինքս զրկելով եմ այդ վայրկեանէն որ ինծի ոյժ պիտի տայ դեռ սպասելու, սպասելու վախճանը ամէն բանի որ ոչինչ եղաւ:

Ինքնիրենը այնպէս գտաւ թէ սկիզբէն ի վեր կըսպասէր արդէն այդ օրհնեալ վայրկեանին որուն արժանի էր:

— Ինչո՞ւ ինքզինքս զրկեմ անկից: Ի՞նչ վնաս կայ ասոր մէջ: Ոչի՛նչ: Ինչպէ՞ս այս գաղափարը միտքս չեկաւ, դուրս ելլելուս պէս, առաջին քայլէս: Տխմար եմ եղեր չիտակը և աւելի պիտի ըլլայի՝ եթէ դեռ վարանէի:

Ասոնք կ'ըսէր ինքնիրենը, մեկնումը փութացնելով, և արդէն իսկ ճամբայ ելած էր: Մանկական՝ բայց տխրագին ուրախութիւն մը կ'ոգեւորէր իր արարքները, իր շարժումը:

— Պիտի երթամ տեսնել զինքը: Վերջապէ՛ս:

Կեանքին նպատակակէտին կը մօտենար և կը կատարէր միակ շարժումը որոն համար կ'արժէր որ ապրէր:

Ծննդավայր քաղաքին մէջ, իմացաւ Հօրթանսի հասցէն, անոր շատոնց կարգուած ըլլալը, համեստ կացութիւնը, հիմակուան մականունը: Ամօլը երեք զաւակ ունէր: Այս լուրը, զոր կը կանխատեսէր չի արտմեցուց զինքը. այնքան երկար ատենէ ի վեր համակերպած էր արդէն, որ նախանձի զգացում մը չէր կրնար գոյութիւն ունենալ իր ներսիդին, և իր սէրը՝ լոկ իտէալական ու անշահախնդիր՝ չնկատեց բնաւ թէ երբեմնի կոյսը իր հմայքէն բան մը կորսնցուցած էր՝ տմուսին և մայր ըլլալով: Կնոջ մը կեանքին այս յեղաշրջումը սովորալօրն բան մը կերեւար իրեն համար, գրեթէ անհրաժեշտ, զոր կանխաւ ընդունած էր, և չէր արգիլէր գոհացումը միակ փափագին զոր ունէր. նորէն տեսնել սիրած կինը, անոր աչքերը, նուրբ հասակը, գեղեցիկ շարժումները, իրենց նուիրական երիտասարդութիւնը համակ:

Հոն ժամանեց: Առտուն դեռ շատ կանուխ ըլլալով սկսաւ քալել քաղքին մէջ ուր կը բնակէր ան. և, հրճուազին, տեսաւ պատեր ու ծառուղիներ որոնց վրայ սեւեռուած էր յաճախ Հօրթանսի նայուածքը. բաղձալի ծառեր ու շէնքեր, փողոցներ որոնց հողը կոխուած էր ան և անկիւններ ուսկից անոր սիրուէդը ուրուադծուած էր. ու քաղաքը կերեւար իրեն տաճարի մը պէս ուսկից կ'անցնէր երկիւղածօրէն, ապառ որ այս աստիճան կը յուզուէր քարերէ զորս առաջին անգամ կը տեսնէր:

Վերջապէս, վախ մը պատեց զինքը երբ մտաւ Հօրթանսի բնակած փողոցը, և անոր տունը վնասուելու պահուն՝ խռովանքը այնքան սաստիկ եղաւ որ ուժերը տկարացան: Սիրաւ ուժգին կը բարախէր: Հանդիպակաց կողմի մայթին վրայ անցաւ և շէնքը՝ դիտեց. պարզուկ և անզարդ տուն մըն էր, այն աստիճան գռեհիկ որ իր երազը կը խանգարէր: Երկրորդ յարկի պատուհաններուն վարագոյրները անախորժ երեւցան իրեն՝ իրենց պոռոտ գոյներովը, և առանց վարանման որոշեց որ իր պաշտած էակը կը բնակէր առաջին յարկի սպիտակ վարագոյրներուն ետին, պարզ, մաքուր, ներդաշնակ՝ անոր պէս:

— Հո՛ն է, մրմնջեց:

Այդ նուրբ քողին ետին կը գտնուէր երջանկութիւնը, տիեզերքը, ինչ որ աշխարհի մէջ կայ բաղձալի, ու անկէ անդին բան մը գոյութիւն չունէր: Յուզումէն կոկորդը կը սեղմուէր: Իր համակ երիտասարդութիւնը, խօստացուած ժամուն մօտաւորութենէն կենդանացած, թռիչ կ'առնէր, ու այդ քառասնամեայ անձը, քանի մը վայրկեան, իր ներսիդին զգաց տասնըփնդ տարեկանի մատաղ հոգին զոր չէր ունեցած բնաւ:

— Ձէի գիտեր թէ զինքը այսքան կը սիրեմ եղեր...

Յանկարծ, նշմարեց որ այնտեղ կեցեր էր ոտքի վրայ, արձանացածի պէս, եւ անցորդները հետաքրքրութեամբ զինքը կը դիտէին: Անոնց նայուածքներէն ինքզինքը ծածկելու համար, փողոցին միւս կողմն անցաւ ու մխրճուեցաւ արտաքին դրան բացուածքէն:

ներս. իր առջև սանդուղ մը կը պար-
զուէր՝ հովհարի ձեւով. գնացքը շարունա-
կեց. բայց երբ գաւթակը նշմարեց՝ դրանը
հետ մէկտեղ, չունչը բռնուեցաւ և բազրի-
քին կռթնեցաւ՝ վերջին աստիճանները կա-
րենալ ելլելու համար:

Վերջապէս հասաւ գոց դրան առջև: Այն
ատեն, ըմբռնելով թէ հնար չէր իրեն ճամ-
բան փոխել, զարհուրեցաւ իր ունեցած յան-
դըրնութենէն. վերջին օրերուն մէջ իր ըրած
բոլոր ձեռնարկները՝ երազի կամ յիմարու-
թեան մէջ կատարուած շարժումներ երեւցան
իրեն, ուսկից կ'արթնար՝ հոն գտնուելուն
ապշահար: Զա՛գակի չուան մը, կանաչորակ
գնդազարդով, կախուած էր իր առջև և կը
չփոթեցներ զինքը: Փորձեց ձեռքը կարկա-
ռել այդ առարկային, բայց ձեռքը վար ին-
կաւ. նոյն վայրկեանին, կը բազմար հեռու,
չա՛տ հեռու դանուիլ, ու կռնակը դարձուց
մեկնելու համար: Բայց աղմուկ մը կը լսուէր
և դուռը բացուեցաւ: Դիրուկ սպասուէի մը
երեւցաւ, որ այս անշարժ մարդուն երեւոյ-
թէն զարմացած՝ կասկածանքով կը զննէր
դայն:

— Ի՞նչ կուզես կոր:

— Տիկին՝ Լամպրէնը, կը ներէք:

— Վրայի յարկն է:

— Շնորհակալ եմ, տիկին:

Սպասուէիին թշնամական նայուածքին
տակ ինքզինքը կանկածելի զգալով, չհա-
մարձակեցաւ ետ դառնալ ու վեր ելաւ.
երկրորդ յարկը զանգակի չուան մը տեսաւ,
միւսին նման, որ ուրիշ դրան մը եզերքը
կախուած էր. կը լսէր որ աղջիկը կը մօրլ-
տար վարէն և անոր պատճառաւ զանգակը
հնչեցուց. գրեթէ իսկոյն Հօրթանս իր առ-
ջեւն էր:

Կիսաստուերին մէջ կեցած էր, բէնեռա-
ռով, գոգնոց մը կապած, մազերը խառնի-
խուռն, մինչ քովընախ խուցէ մը ցոլացող
լոյսը խարտիչաներ լուսապսակ մը կը ձեւաց-
նէր. տղայ մը կախուած էր քղանցքէն:
Աչքովը կը հարցափորձէր այս այգայարոյց
այցելուն, որ բարեւեց զինքը. Ու վերջապէս
մըմնջեց. «Ու զեցիլ գայ...»:

Ծանցաւ անոր ձայնը ու տկար ճիչ մը
արձակեց. յետոյ, ընկրկեցաւ:

— Թերեւս անհանգիստ կընեմ զձեզ, վը-
րայ բերաւ մարդը:

— Բայց ո՛չ... հրամայեցէք:

Հետեւեցաւ անոր ու մտաւ ճաշարան մը
որուն տախտակայութիւնը չի նշմարեց: Հօր-
թանս, արագ շարժումով մը, գոգնոցը կը
հանէր:

— Այնչափ միտքէս չէր անցներ որ...
ներեցէ՛ք... այս հագուստով... վաճառորդ-
ները այս ժամուն...:

— Անքաղաքավարութիւն էր արդեօք
ըրածս:

— Բնա՛ւ: Սմուսինս շատ պիտի ցուի:
Յուսամ թէ առողջութի ննիդ լաւ է: Նի-
տակը, կ'ամչնամ կոր: Նպտեցէք, խնդրեմ:

Անհանգիստ կերեւար Հօրթանս. կը շար-
ժտկէր, աչքերը աջ ու ձախ դարձնելով,
դարանը գոցելով, աթոռակ մը սեղանին
տակ քշելով, ու մէկ ձեռքով աթոռ մը կը
կարկատէր Ֆիլիքին, մինչ միւսովը՝ կը ժող-
վրտէր տղոց լաթերը զորս անկիւն մը կը
նետէր: Այցելուն զիսեց որ անոր այտերը
այլևս դարնան ծաղիկներ չէին ու չըթունք-
ները գունատած էին:

— Դեռ տունը տեղը ժողվուրտուած չէ,
ըսաւ: Սպասուէին չուկայ գնաց: Ահ, եթէ
գլխոնայի որ հիւր պիտի գար...

Միւսը՝ քիչ մը անկապակից խօսքերով
պատասխանեց, ներում խնդրելով իր գալուն
համար, և պատմեց թէ քաղաքէն անցնելու
վրայ ըլլալով՝ ուղած էր կանգ առնել երկու
կառախումբերու դադարի միջոցին:

«Մեծ ազնուութիւն է ըրածնիդ» պա-
տասխանեց մանկամարդ կինը որ արդէն ա-
կանջ չէր կախեր անոր, զրաղած ըլլալով
վերցնելու սեղանին վրայ դնուած խոհա-
նոցի ջնջան մը, առանց Ֆիլիքին ուշադրու-
թիւնը հրաւիրելու: Պզտիկ մանչը ձգած էր
մօրը՝ քղանցքը և անծանօթին կը մօտենար
որուն ծուռքին կը զարնէր:

— Հո՛ս եկուր Պաթիսթ, պարոնը անհան-
գիստ մի՛ ըներ:

Այս բառերը որոնք զինքը ամբոխին կար-

գը կը դասէին, այս «պարոն»ը, ցրտօրէն թափանցեցին Ֆիլիբի հոգիին մէջ ու ստուգուցին զայն: Դէպի տղան ծռեցաւ, դէմքը ծածկելու համար, եւ ըսելիք խօսք մը չի գտնելով սկսաւ զլուխը օրօրել փոքրիկ արարածին առջեւ, զայն գուարճացնելու համար: Հօրթանս այս շարժումէն օգուտ քաղեց ու ջնջանը անհետացուց: Այն ատեն, աւելի հանդարտ, նստաւ եւ կրկնեց թէ ամուսինը շատ պիտի ցաւի հոն գտնուած չըլլալուն:

— Յաճախ կը խօսինք ձեր վրայ:

Ու հարցուց թէ ո՞ր պահուէնը իջած էր. որքա՞ն ատեն պիտի մնար:

— Ժամը հինգին կառախումբով կը մեկնիմ:

— Հետեւինս ընթերցու հաճոյքը չպիտի պատճառէք մեզի:

Երկուքն ալ խոյս տուին անցեալին ակնարկութիւն մը ընելէ, եւ լուրթեան այս դաշինքը միակ մտածումը եղաւ զոր միահաղոյն ունեցան: Ուրիշ ամէն բան կը բաժնէր զիրենք. Հօրթանս, յայտնապէս ամօթահար իր բնակարանին վիճակէն, աւելի նեղուած էր քան յուզուած. Ֆիլիբ տաղտկացուցիչ կը գտնէր ինքզինքը, եւ իր յուզումն ալ կ'անհետանար. ուշադրութեամբ, միանգամայն զարմանքով կը դիտէր իր դէմ նշատած կինը, եւ աղէկ չէր ճանչնար զայն. իրեն այնպէս կուգար թէ օտարուհի մըն էր ան, հեռուէ հեռու հաղորդակցութիւն ունեցող Հօրթանսին հետ, ասորտամ' նմանութիւն մը դիմագծերու կամ ձայնի, մանաւանդ նայուածքի. այս կնոջ ներկայութիւնը, որ քաղաքավարական ցամաք խօսքեր զրուցելու կը հարկադրէր զինքը, կ'արգիլէր զինքը միւսը սիրելէ ու զայն յիշելէ:

Տիկին Լամպրէն, հիւր ընդունող մէկու մը պէս, խօսեցաւ իր ամուսնին, իր զաւկներուն, իրենց վարած կեանքին վրայ: Ֆիլիբ, որ բանի մը վրայ չէր մտածեր սակայն, դէշ աղէկ կը հետեւէր այս տեղեկութեանց որոնց կարօտը քաշած էր և որոնք, յանկարծ, այլեւս չէին հետաքրքրեր զինքը:

Խօսակցութիւնը կը դանդաղէր. թերեւս կէս ժամ տեւեց, և թերեւս կրկնապատիկը

կամ կէսը. իրենք ալ չի գիտցան, բայց ժամանակը երկար թուեցաւ իրենց: Ֆիլիբ կը վախնար որ մի' գուցէ անազնուութիւն մը ըրած ըլլայ՝ շատ շուտ մեկնելով: Բայց վերջապէս ոտքի ելաւ:

Իսկոյն, Հօրթանս ալ ոտքի ելաւ. հարկ դատեց նորէն ցաւ յայտնել ամուսնին բացակայութեանը համար: Զեռքը կարկառեց Ֆիլիբին. նոյն վայրկեանին, իրենց ակնարկները իրարու հանդիպեցան և խոյս տուին շուտ մը. իրենց երկու ձեռքերն ալ, ակամայ, դողացին՝ սեղմումի ատեն, ու անոնք ալ խոյս տուին իսկոյն. յուզման ու միութեան միակ վայրկեանը եղաւ ասիկայ իրենց միջև:

Ֆիլիբ դէպի տղան ծռեցաւ ու դրկեց զայն: Այդ վայրկեանին, կատարեւապէս հանդարտ էր. բայց երբ փոքրիկ էակին երեսը իրենին դէմ առ դէմ եկաւ, այդ մանկական աչքերուն մէջ նշմարեց յանկարծ Հօրթանսի նայուածքը, իրենց համըղորդ իրիկունը. այս հանդիպումին չէր սպասէր բնաւ ու սիրտը սարսռաց վերջին անգամ:

— Ահ, ըրաւ:

Բայց անցեալին այս վերջիշումը իր միտքը լուսաւորեց յանկարծ խորհրդանշանի մը պէս որ ամէն բան կը բացատրէր իրեն. «Մեր աչքերը այլեւս մերը չեն, անոնք կը պատկանին ուրիշներու որոնք կուգան մեզի յաջորդել երկրի վրայ. մենք մեռած ենք...»:

Երկիւղածօրէն, ու արտուանուէնքը դոյ, հրաժեշտի համբոյր մը դրոշմեց պղտիկ ճերմակ ճակտին վրայ, խոպոպիկներով չըջանալուած:

«Մնա՛ս բարով» ըսաւ:

Հօրթանս ըմբռնեց թերեւս, վասն զի չի պատասխանեց:

Ֆիլիբ սեմէն անցաւ, առանց ետին դառնալու: Լսեց դրան գոցուիլը իր ետեւէն: Ալ լմնցած էր: Դէպի կայարան դնաց ու ամբողջ վեց ժամ մայրին վրայ պտտեցաւ՝ կառախումբին սպասելու համար: Իր սէրը մեռած էր, և աշխարհը անհունապէս ամայի երեւցաւ իրեն:

ԻՏՄՈՐ ՀԱՐՈՐՈՒՐ

ՀԱՅՆՅՈՒՄՆԵՐ

ՍԻՐԵՐԳ

Սին անուրջներու եւ սենչանքներու
Օրորումին մեջ հոգիս սրւայտո՛ւ
— Ուժով ու պրնդիչ ձայներէն հեռու —
Քրնարեղուքիւն մ'ունի անծանո՛թ :
Ինքնախաբուրքիւն քլլայ կամ պատահմ,
Եւ կամ երջանիկ ակընթարք մ'անհո՛ւն,
Խրոնովի անվերջ տղանցումին տակ՝
Կը սարսընկոտի տերեւի հանգոյն... :
Օ՛ յուզումն անկեղծ ու մըմունչն անսոս,
Օ՛ երգն անտեսուած, ինքնամոփոփ սրտին,
Ուր կ'արփիանայ երկընքի կայայտ
Հորիզոններուն քերուածք լըռին...
Բիւրեղ յոյսերու դիւրաբե՛կ անօք,
Բաքախկոտ անկիւն՝ այդ սիրտ-պահարանն,
Ուր մերք հեռաւոր ու մերք անծանօք
Յուշեր կը յածին ըսուերի նման.
Ու տարամ ցաւի վախէն մոյրումն,
Այդ հրպանցումներն երբ զիս վերկոչեն,
Փըցիլ կ'ըսպառնայ սիրտ-անօթն ուրուն
Ահ, չեմ նեւեր ու հրպին նենգօրէն... :

Մ. ՌԻՂՈՒՐԼԵԱՆ

ՄԵՐ ԳԱՒԱՌԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ ՌԻԳՈՐԾԱԿԱԼՆԵՐՈՒՆ

Հակառակ մեր այն առաջադրութեան ու յայտարարութեան, որով բաժանորդագրութեանց կանխիկ վճարման դրութիւնը հաստատել ուղեղինք ներկայ տարեշրջանի սկիզբէն — և որ մասամբ իր արդիւնքը տուաւ; — տակաւին կը գտնուին գաւառային բաժանորդներ որոնք իրենց պարտքը չեն հատուցած մինչև Ղրդ ամսուն սկիզբը, այսինքն 6 ամիս թերթը ստանալէ ետքն իսկ, և գործակալներ որոնք իրենց հաշիւը չեն մաքրած ու կարգադրած: Գաւառային ընթերցողներու և գործակալներու այս դատարարը, որ բարեբաղդաբար փոքրամասնութիւն կը կազմէ՝ պարտաճանաչ բաժանորդներուն և ուղղամիտ գործակալներուն հետ բաղդատմամբ, — իրաւունք պիտի տայ մեզի անշուշտ, երբ ծանուցանենք թէ յառաջիկայ չարաթէն սկսեալ՝ պիտի դադրեցնենք իրենց Մասիսներուն առաքումը, զոր այն ատեն պիտի վերսկսինք շարունակել՝ երբ հասցնեն մեզ իրենց տարեկան բաժանորդագրիւնները: Հակառակ պարագային, գէթ պիտի պահանջենք իրենցմէ, իրենց խնդրանօք արդէն իսկ զրկուած 28 թիւերուն փոխարժէքը, բօթայի ծախքով միասին: Նոյնպէս հրապարակաւ կը խնդրենք այն քանի մը գործակալներէն ու բաժանորդներէն որոնցմէ պահանջք ունինք 1903ի տարեշրջանէն, որ փութան մաքրել իրենց հաշիւները:

ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»

ԽՄԱՐԱԳՐԱԿԱՆ ԾԾԵՐ

Կայս. Ենոքի. — Կը յիշուի թէ Սիսի վանքին սեպհականութիւն եղող Թլան ագարակը՝ Կիլիկիոյ հանգուցեալ Մկրտիչ Կաթողիկոսն իր անուան փոխանցած ըլլալով, հողային դատի մը առթիւ, անոր մահէն ետքը այդ ագարակը իբր մահլիւլ նկատուեցաւ և անցեալ տարի ի վաճառ հանուեցաւ տեղական կառավարութեան կողմէ։ Արդ, Կիլիկիոյ Տ. Սահակ Ս. Կաթողիկոսին դիմումներուն և խնդրանքներուն վրայ, Կայս. բարեհաճ Իրատէ մը հրամայած է որ յիշեալ ագարակը Սիսի վանքին վերադարձուի և անոր սեփականութիւն նկատուի վերջնականապէս։

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը, որ Մարաշ գտնուած միջոցին իմացած էր այս բերկրառիթ լուրը, հեռագրով հաղորդեց զայն Սիսի վանքին Միաբանութեան որ հանդիսաւոր բարեմաղթութիւններ ըրաւ Վեհ. Կայսեր արեւչատուրութեանը համար։ Կիլիկիոյ ամէն կողմերն ևս երախտագիտութեամբ իմացուած է՝ Կայսերական այս բարձր շնորհը և ամէն ուրեք բարեմաղթութիւնք կատարուած են։

Ս. Պատրիարքը շաքաթ իրիկուընէ մինչև երեքշաբթի հիւրընկալուեցաւ Սկիւտար, Սուրենեան Եղբարց բնակարանը, կիրակի առաւօտ պատարագելով Ս. Կարապետ եկեղեցին որուն տօնախմբութիւնն էր և երկուշաբթի քարոզելով Ս. Խաչ եկեղեցին։ Ն. Սրբազնութիւնը զբաղեցաւ նաև թաղային մատակարարութեան խնդիրներով ու նախագահեց դպրոցական հանդէսներու։

Սեուսաղեմի գործերուն վրայ բերանացի տեղեկութիւններ հաղորդեց Գէորգ Էֆ. Աս. լանեան Ս. Պատրիարք Հօր, հինգշաբթի օրը երկար տեսակցութիւն մը ունենալով Ն. Ամենապատուութեան հետ, և բացատրեց այն պատճառները որոնցմով յէր ընդունած քննիչ — պատուիրակի պաշտօնը՝ հակառակ Պատրիարքարանի ստիպումներուն։

Հռոմեակաց աղգային մը մեր Պատրիարքարանը դիմելով, փափագ յայտնած է Մայրենի եկեղեցին ընդունուելու։

Դպրեվանքի վերառեսուչ Դուրեան Սըրբազան մայրաքաղաքս եկաւ շաբթուս մէջ։

Օրաքերքերը կը ծանուցանեն թէ Հայրապետական հրամանով՝ Ամերիկայի Հայոց առաջնորդ Տ. Յովսէփ եպիսկ. Սարաճեան Բարիզ հասեր է, իրեն փոխանորդ կարգելով Տ. Արսէն վրդ. Վեհունին։— Նոյնպէս, Պարսկաստանի Սալմաստ քաղաքի հոգեւոր հովուութեան կոչուած է, Հայրապետական հրամանով, Ամերիկաբնակ Տ. Մաշթոց վրդ. որ Բարիզ հասեր է՝ անկէ իր նոր պաշտօնավայրը ուղեւորելու համար։

Նախորդ թիւով փութացած էինք հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել հայ և օտար օրաթերթերուն՝ Մասիսի հիմնադիր — արտօնատիրոջ մահուան առթիւ իրենց համակրական ու ցաւակցական զգացմանց արտայայտութեանն համար։ Պարտականութիւն կը համարինք մեզի, շնորհակալութիւն յայտնել նաև Արեւ. Մամուլ, Աւեսաբեր, Բիւրակն, Լոյս, և Փունջ շաքաթաթերթերուն՝ ողբացեալ Կարապետ Էֆ. Իւթիւճեանի յիշատակին նուիրուած իրենց վշտակցական ու դնահատական տողերուն համար։

ՀԱՅՈՒՂԵԱՅ ՎԱՐՅԱՐԱՆ

ԱՏԱԲԱԶԱՐ

Վարժարանիս յառաջիկայ տարեկըջանը պիտի սկսի Սեպտ. 2/15ին, եւ. առաւօտ։ Գիշերօթիկներու տարեթոյակն է 12 օամ. ոսկի, որուն կէսը պէտք է վճարել Սեպտ. մէջ, և կէսը Յունուարի մէջ։ Ծաբաթը դաշնակի մէկ դասի համար տարեկան 3 օամ. ոսկի աւելի կը պահանջուի։ Երգեհոնի դաս առնողները տարին 1 ուկէս ոսկի աւելի կը վճարեն։

Վարժարանին յայտագիրը ուղղորդներուն ձրի կը ղրկուի։ Ուրիշ տեղեկութեանց համար դիմել Մր. Բիթի, Պայպըլ — Հառու, Կ. Պոլիս, կամ գրել Տօթթ. Ս. Էֆ. Գավալճեանի, ատենապետ խնամակալութեան, Ա. տաքաղար։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐ

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐՓԱՐԱՆ

Պէրպէրեան վարժարանի ամսվերջի հանդէսը կատարուեցաւ երեքշաբթի օրը, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր, և կըրթական, գրական ու լրագրական դասերու պատկանող ծանօթ ազգայնոց ներկայութեամբ: Եկեղեցական դասէն եկած էին Տ. Հմայեակ և Տ. Մկրտիչ Սրբազանները: Կըրթական նախարարութեան ներկայացուցիչն էր Սալիհ պէյ: Կայս. Համիտիէ քայլերդին նուագումէն ետքը, որ յոտնկայս ունկնդրուեցաւ ու ծափահարուեցաւ, Պէրպէրեան էֆ. կարդաց իր տարեկան տեղեկագիրը որուն մէջ դոնութեամբ կը հաղորդէր թէ կրթական նախարարութիւնը որոշած է վաւերացնել Պէրպէրեան վարժարանի ընթացաւարտներուն վկայականները, որով դիւրութիւն պիտի ունենան կրթական բարձրագոյն հաստատութիւններ մտնելու: Նոյնպէս շնորհակալութեամբ յիշեց թէ Նշան էֆ. Գազադեան իր հաստատած 10 ոսկիի տարեկան մրցանակը բարձրացուցած է 20 ոսկիի:

Պէրպէրեան վարժարանը այս տարի ունի 17 չրջանաւարտ որոնց 13ը Պոլսեցի ու 4ը գաւառացի:

Երաժշտական հատուածներու նուագումէն ու ճառերու արտասանութենէն ետքը, բաշխուեցան վկայականները և Ս. Պատրիարքը փակեց հանդէսը՝ դիւրատելով Պէրպէրեան էֆ.ի կրթական արդիւնաւոր աշխատութիւնը և քաջալերելով ու օրհնելով ուսանողները: Ն. Սրբազնութիւնը խօսքն աւարտեց, բարեմաղթութիւններ ընելով Վեհ. Կայսեր արեւշատութեանը համար:

Աշակերտները միաբերան երգեցին «Հայր մեր» և Պահպանիչով վերջացաւ այս պարզ բայց գեղեցիկ հանդէսը:

ԻՍՍԵԱՆ ՎԱՐՓԱՐԱՆ

Բերայի էսսեան երկսեռ վարժարանի հանդէսն ալ տեղի ունեցաւ չորեքշաբթի,

նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր որուն շուրջը կը գտնուէին Բերայի քարոզիչ Սրբազանը և Աւագերէց Տ. Մկրեան հայրը, Թաղ. Խորհուրդ, Հոգաբարձութիւն: Վարժարանին վերաշինող—բարերարը՝ Մկրտիչ էֆ. էսսեան անձամբ պատասխանած էր իրեն ուղղուած հրաւերին, և ընդունուեցաւ արժանավայել մեծարանքով:

Հանդէսը բացուեցաւ Կայս. Համիտիէ քայլերդով, զոր նուագեցին աշակերտուհի մը ու աշակերտ մը, և որուն յոտնկայս ունկնդրեցին ներկաներն ու ծափահարեցին: Տեսուչ Դրիգոր էֆ. Մարգարեան կարդաց ամփոփ տեղեկագիր մը ուսկից կերեւար թէ ներկայ տարիչրջանին մէջ էսսեան վարժարանը ունեցած է 398 երկսեռ աշակերտ, Նարեկեանը՝ 240, Տօլապ—Տէրէի Արշակունեանը 130 և Բանկալթիի Ս. Լուսաւորչեանը՝ 60: Էսսեան վարժարանը այս տարի ունի 21 չրջանաւարտ, 8 աշակերտ և 13 աշակերտուհի:

Տեղեկագրի ընթերցումէն ետք, դաշնակի վրայ զանազան հատուածներ նուագուեցան և ճառեր արտասանեցին՝ Օր. Սաթենիկ Բ. Բէշեան հայերէն, և Պ. Պօղոս Մ. Տէր-Ներսէսեան թուրքերէն:

Հանդէսը փակեց Ս. Պատրիարք Հայրը՝ հակիրճ բանխօսութեամբ մը, գովելով Հոգաբարձութեան ջանքերը, ուսուցչական մարմնոյն և տնօրէնին աշխատութիւնները ու օրհնելով սաները ու սանուհիները: Ն. Սըրբազնութիւնը իր բանախօսութիւնը աւարտեց բարեմաղթութիւններ ընելով Վեհ. Կայսեր արեւշատութեանը համար:

Սկիւտարի ճեմարան վարժարանի հանդէսն ալ կատարուեցաւ երկուշաբթի օրը Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ և գոհացուցիչ տպաւորութիւն մը թողուց ներկաներուն վրայ:

Հիմնադիր—Արսօնաթէր Կ. Ս. Իիթիօճեան
Պատասխանատու—ՏԳՕՐԿԵ ՏՈՒԹ. ԵՂ. ՍԱՍԻՍ

Տպագրութիւն՝ ԱՐԵՒԵԼՔ Օրագրի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Տօքթ. Բ. Էմիրզէ, որ իր բժշկական ուսումը կատարելագործած է Բարիզի մէջ եւ 15 տարիէ ի վեր մեծ փորձառութիւն չափած է այժմ հաստատուած է. Բերա Պէօյիւք Բարմաք Գարու. Թիւ 16: Մասնագէտ է մանկաբարձութեան եւ կանացի հիւանդութեանց եւ ատենց մէջ առաջադէմ մեթոտներով կը բուժէ ջղային ու նոզեկական ամէն կարգի հիւանդութիւններ ինչպէս նաեւ արգանդախցուժէ (hystérie) առաջ եկած հիւանդութիւնները, մասնակի անդամալուծութիւն եւ կարկամութիւն եւ այլն: Ասկէ դատ. օսկորի եւ սովորական խոլը (սրբաճա), առանց գործողութեան նոր դրութեամբ մը կը դարձանէ, տեղը առանց յայտնի ընելու: Տօքթ. Էմիրզէ էֆ. կը գտնուի Բերա Պէօյիւք Բարմաք Գարու. Թիւ 16 տան մէջ, ուր կիրակիէն դատ. ամէն օր կէսօրէն յետմիջամբ 1էն մինչեւ 4 (Ը. Ե.) հիւանդ կ'ընդունի, եւ ուրքաթ օրերն ալ ձրիաբար կը դարմանէ հիւանդները:

ՏՕՔԹ. ԲՕՐԹՈՒԳԱԼԻՍ

(Dr. Portucalis)

Նախկին օւսուցիչ Կ. Պոլսոյ Կայս. Բժշկական վարժարանին, անդամ Բարիզի Բժշկական համաժողովին: Մասնագէտ արանց եւ կանանց ծննդական գործարան երաւ հիւանդութեանդ: Պատւոյ վկայագիր ունի Պէրլինի, Լեյպցնի, Բեշթայի ուրիշ երկիրներու Ակադեմիաներէն: Հնարիչ բժշկական գործիքներու եւ հեղիակ իր մասնագիտութեան վերաբերեալ գործերու: Հիւանդ կ'ընդունի Պոլսոյ Կողմը Կամուրջին դէմի անկիւնը, իր դարմանատան մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ իրկուն. իսկ Բերա, Թաքսիմ, Ֆրանսական հիւանդանոցին դէմ, ամէն օր առաւօտէն մինչեւ կէս օր եւ իրիկուն ժամ 6 էն 9 (Ը. Ե.)

ՆՈՐ ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵՂՈՒԻ

Պատկերազարդ 1000 Է. աւելի հզօրեւ

բաղկացած

Ս Ի Մ Ո Ն Գ Ա Ր Ա Մ Ա Ճ Ն Ա Ն

Նախեաց բառերու նորոգանութիւններ,

— գաւառական բառեր հանրագիտական հատուածներ, երկրագործութեան, գիտութեանց, դիցաբանութեան, առողջաբանութեան, օրինագիտութեան, ճարտարութեան:

Դործուկան կենաց վրայ:

Հայերէն լեզուի բառական ճօն եւ դիւրատար բառագրքի մը պէտքը ընդհանուր եղած էր ցարդ. Ահա այդ պէտքը լրացնելու կոչուած է սոն գործն. օգտուելով հայ եւ օտար բազմաթիւ բառագրքերէ: Խնամքով հետազոտուած են բառերու ճշգրիտ նշանակութիւններն, անոնց օրոշ եւ ամփոփ սահմաններն, իրենց հակառիշներով ու համարիչներով. հին օւ նոր պէսպէս առումներով. Զ. ոց չէ առնուած նաեւ դնել բառերու ծագումն, կենդանեաց, բուսոց ու

դասակարգութեան վարաբերիչը. ի հարկին անոնց թուրքերէն ու ֆռանսերէնն եւս:

Բացի բուն բառագրքէն՝ գործոյս ամբողջ ընթացքին մէջ հանրագիտական հատուածներ կարեւոր տեղեկութիւն կուտան երկրագործութեան, գիտութեանց, դիցաբանութեան, առողջաբանութեան, օրէնագիտութեան, ճարտարութեան, գործնական կենաց վրայ:

Հրատարակուած են առաջին երեք թերթերն եւ միւսներն ալ յաջորդաբար կանոնաւորապէս լոյս պիտի տեսնեն: Թուղթ ազնիւ եւ տպագրութիւն ընտիր եւ խնամեալ, զօրդարուած յատկապէս փորագրուած օրրուն եւ ճաշակաւոր պատկերներով:

Բացուած է բաժանորդագրութիւն հանրային քաջալերութեան արժանի սոյն գերազանցապէս օգտակար գործոյն համար. 20 դահեկան, Պոլսոյ, 25՝ գաւառաց, թղթատարի ծախսից համար եւ 6 ֆրանք օտար երկիրներու համար:

Հեղինակին հասցէն

Կ. Պոլիս, Հաճօբուլօ խան, Թիւ 24

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիեննա)

ՊԱՏՈՒԱԿԱՆ ԿԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ն. Ա. Ք.

ԴՈՒՔՍԱՆԻՅԵ ՊԱՎԻՔ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ


Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային արկածներու (ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւն կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս. Քոնսթ. Լիօն
Ընդի. եւ լիազօր ներկայացուցիչ թուրքիոյ

Պ. Յ. Յ. Յ. Յ. Յ.

Գրասենեակ, Պոլիս, Հաճօբուլօ խան, Թ. 52—53—54—55—56



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ստանալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տալտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը: Կանոնաւոր եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկերի մեքենաները կը դնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՍԻՆԿԵՐԻ
ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

ԲԵՐՍ.

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ.

1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ.

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյադիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՐՏԱՐ.

Չարլը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք անձի.

կատարեալ երաւանորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերս. Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղաղլուի տունը: